

## ԱՌՑԱՆՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

### Մեդիայի հարգելի ներկայացուցիչներ

Սույն հուշաթերթիկը կօգնի Ձեզ նախապես պատրաստ լինել՝ անցնելու ԱՌՑԱՆՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ գործընթացը:

ԱՌՑԱՆՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄՆ անցնելու համար Դուք պետք է կատարեք մի քանի պարզ գործողություններ:

Նախ պետք է լրացնեք մի քանի անձնական տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամարներ, էլ. փոստի հասցե և այլն), պետք է բեռնեք Ձեր լուսանկարը, որպեսզի ունենաք ՕԳՏԱՏԻՐՈՋ ՊՐՈՖԻԼ:

Հաջորդ փուլում պետք է լրացնեք մի քանի տվյալներ՝ կապված Ձեզ հավատարմագրող Մեդիայի հետ, պետք է ընտրեք հավատարմագրվողի Ձեր կարգավիճակը (Տպագիր մեդիայի լրագրող, Ինտերնետ ռեսուրսի լրագրող, ինտերնետ ռեսուրսի օպերատոր, Հեռուստալրագրող, Հեռուստաօպերատոր, Ռադիոլրագրող, Ֆոտոլրագրող, Ազատ լրագրող, ՀՀ-ում օտարերկրյա լրատվամիջոցի թղթակից):

Պետք է բեռնեք նաև Ձեզ հավատարմագրող Մեդիայի ղեկավարի նամակը՝ կնքված և ստորագրված, ինչպես նաև Ձեր լրագրողական վկայականի պատճենը՝ ՁԼՄ-ի ղեկավարի կողմից կնքված և ստորագրված: (pdf gif jpg png):

Հաջորդ փուլերում, եթե Դուք Տպագիր Մեդիայի լրագրող եք, պետք է բեռնեք հավատարմագրման այս գործընթացին նախորդած 3 (երեք) ամսվա ժամանակահատվածում Ձեր կողմից գրված և ստորագրված նվազագույնը 5 (հինգ) ֆուտբոլային նյութի (լուր, վերլուծություն, հոդված և այլն) թվային տարբերակները (pdf, jpg): Ի դեպ, այդ նյութերից առնվազն երկուսը պետք է տպագրված լինեն այն Մեդիայում, որի ղեկավարի նամակով Դուք հավատարմագրվում եք: Եթե այդ նյութերը հրապարակված են նաև տվյալ տպագիր Մեդիան ներկայացնող կայքում, պետք է կցեք նաև այդ նյութերի հղումները:

Եթե Դուք Ինտերնետ ռեսուրսի լրագրող եք, պետք է կցեք հավատարմագրման այս գործընթացին նախորդած 3 (երեք) ամսվա ժամանակահատվածում Ձեր կողմից գրված և ստորագրված նվազագույնը 5 (հինգ) ֆուտբոլային նյութի (լուր, վերլուծություն, հոդված և այլն) հղումները: Ի դեպ, այդ նյութերից առնվազն երկուսը պետք է հրապարակված լինեն այն Մեդիայում, որի ղեկավարի նամակով Դուք հավատարմագրվում եք:

Եթե Դուք Հեռուստալրագրող եք, պետք է կցեք հավատարմագրման այս գործընթացին նախորդած 3 (երեք) ամսվա ժամանակահատվածում Ձեր կողմից պատրաստված նվազագույնը 5 (հինգ) ֆուտբոլային նյութի (ռեպորտաժ, հաղորդում, հեռուստատեսային այլ արտադրանք և այլն) հղումները: Ի դեպ, այդ նյութերից առնվազն երկուսը պետք է

թողարկված լինեն այն Մեդիայում, որի ղեկավարի նամակով Դուք հավատարմագրվում եք:

Եթե Դուք Ֆոտոլրագրող եք, պետք է բեռնեք հավատարմագրման այս գործընթացին նախորդած 3 (երեք) ամսվա ժամանակահատվածում Ձեր կողմից արված նվազագույնը 5 (հինգ) ֆուտբոլային հանդիպման լուսանկար՝ նախատեսված նախադիտման համար: (լուսանկարի չափը՝ ոչ պակաս 1200\*800 px-ից): Ի դեպ, այդ լուսանկարներից առնվազն երկուսը պետք է թողարկված լինեն այն Մեդիայում, որի ղեկավարի նամակով Դուք հավատարմագրվում եք: Եթե Ձեր լուսանկարները տպագրված են տպագիր Մեդիայում, պետք բեռնեք հրապարակված լուսանկարների էջերի թվայնացված տարբերակները: (pdf, jpg):

Եթե Դուք ՀՀ-ում օտարերկրյա Մեդիայի ներկայացուցիչ եք, պետք է բեռնեք կամ կցեք հավատարմագրման այս գործընթացին նախորդած 5 (հինգ) ամսվա ժամանակահատվածում Ձեր կողմից գրված և ստորագրված նվազագույնը 5 (հինգ) ֆուտբոլային նյութի (տպագիր նյութ, հեռուստատեսային արտադրանք, ռադիոնյութ, լուսանկար և այլն) հղումները: Ի դեպ, այդ նյութերից առնվազն երկուսը պետք է հրապարակված լինեն այն Մեդիայում, որի ղեկավարի նամակով Դուք հավատարմագրվում եք: (pdf, jpg, png, podcast):

Եթե Դուք Ազատ լրագրող եք, պետք է բեռնեք կամ կցեք հավատարմագրման այս գործընթացին նախորդած 3 (երեք) ամսվա ժամանակահատվածում Ձեր կողմից գրված և ստորագրված նվազագույնը 5 (հինգ) ֆուտբոլային նյութի (տպագիր նյութ, հեռուստատեսային արտադրանք, ռադիոնյութ, լուսանկար և այլն) հղումները: Ի դեպ, այդ նյութերից առնվազն երկուսը պետք է հրապարակված լինեն այն Մեդիայում, որի հետ ունեք պայմանագրային պարտավորություններ:

Դուք ունեք հնարավորություն՝ ՆԱԽԱԴԻՏԵԼ Ձեր կողմից լրացված տվյալները և հետո նոր դրանք ուղարկել: